



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԴԱՏԱՐԱՆՆԵՐԻ ՆԱԽԱԳԱՀՆԵՐԻ ԽՈՐՀՈՒՐԴ

ՈՐՈՇՈՒՄ № 20Ա

ԼՈՌՈՒ ՍԱՐՁԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԻՐԱՎԱՍՈՒԹՅԱՆ ԱՌԱՋԻՆ ԱՏՅԱՆԻ ԴԱՏԱՐԱՆԻ ԴԱՏԱՎՈՐ ԳՐԻԳՈՐԻ ՎԱՐԴԱՆՅԱՆԻՆ ԵՐԵՎԱՆ քԱՂԱՔԻ ՇԵՆԳԱՎԻԹ ՎԱՐՉԱԿԱՆ ՇՐՋԱՆԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԻՐԱՎԱՍՈՒԹՅԱՆ ԱՌԱՋԻՆ ԱՏՅԱՆԻ ԴԱՏԱՐԱՆ ԳՈՐԾՈՒՂԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Երևան քաղաքի Շենգավիթ վարչական շրջանի ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի (այսուհետ նաև՝ Դատարան) նախագահ Դավիթ Բալայանը Հայաստանի Հանրապետության դատարանների նախագահների խորհրդին ներկայացված միջնորդությամբ հայտնել է, որ՝

14.07.2017թ. դրությամբ Դատարանում ստացվել է 2847 քաղաքացիական գործ, 142 սնանկության գործ, 2439 վճարման կարգադրություն: Նախորդ տարվանից փոխանցվել է ընդհանուր առմամբ 4537 քաղաքացիական և 374 սնանկության գործ: Մասնավորապես, 14.07.2017թ. դրությամբ դատավոր Ն.Հովսեփյանի վարույթում առկա է անավարտ 1691 քաղաքացիական գործ, դատավոր Ա.Չիչոյանի վարույթում առկա է անավարտ 1695 քաղաքացիական և 222 սնանկության գործ, դատավոր Ա.Կուրանյանի վարույթում առկա է անավարտ 570 քաղաքացիական և 153 սնանկության գործ, գործուղված դատավոր Գ.Նարինյանի վարույթում առկա է անավարտ 746 քաղաքացիական և 33 սնանկության գործ:

Հիշյալ գերծանրաբեռնվածության պայմաններում ակնհայտ է, որ դատավոր Գ.Նարինյանի գործուղման ժամկետի ավարտից հետո վերջինիս վարույթում գտնվող անավարտ գործերը մյուս քաղաքացիական մասնագիտացմամբ դատավորների միջև վերաբաշխելու դեպքում կխախտվի գործերի ողջամիտ ժամկետներում քննության հարցը, ինչը բացասաբար կանդրադառնա դատական ակտերի որակի վրա:

Ելնելով վերոգրյալից՝ խնդրել է քննարկել դատավոր Գ.Նարինյանի գործուղման ժամկետի ավարտից հետո Դատարան քաղաքացիական մասնագիտացում ունեցող նոր դատավոր գործուղելու հարցը:

Դատարանում առկա է քաղաքացիական մասնագիտացում ունեցող 4 դատավորի հաստիք: Դատարանի քաղաքացիական մասնագիտացում ունեցող դատավոր Իշխան Բարսեղյանի անուն-ազգանունը ՀՀ դատական օրենսգրքի 21.2-րդ հոդվածի 7-րդ մասի համաձայն հանված է գործերի բաշխման ցանկից:

ՀՀ դատարանների նախագահների խորհրդի 2016թ. նոյեմբերի 30-ի թիվ 32Ա որոշմամբ Արագածոտնի մարզի ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի դատավոր Գևորգ Նարինյանը 2016թ. դեկտեմբերի 12-ից սկսած վեց ամիս ժամկետով գործուղվել է Գատարան, իսկ ՀՀ դատարանների նախագահների խորհրդի 2017թ. մայիսի 18-ի թիվ 08Ա որոշմամբ վերջինիս գործուղման ժամկետը 2017թ. հունիսի 13-ից երկարաձգվել է երեք ամիս ժամկետով, ինչպես նաև վերջինիս անուն-ազգանունը մինչև 2017թ. սեպտեմբերի 13-ը ներառյալ հանվել է գործերի բաշխման ցանկից:

ՀՀ դատարանների նախագահների խորհուրդն արձանագրում է, որ 01.01.2017-01.09.2017թթ. դրությամբ Գատարանում ստացվել է 3474 քաղաքացիական գործ: Նախորդ տարվանից փոխանցվել է ընդհանուր առմամբ 4537 քաղաքացիական գործ և 374 սնանկության գործ: Մասնավորապես, 01.09.2017թ. դրությամբ դատավոր Ն.Հովսեփյանի վարույթում առկա է անավարտ 1958 քաղաքացիական գործ, դատավոր Ա.Չիչոյանի վարույթում առկա է անավարտ 1625 քաղաքացիական գործ, դատավոր Ա.Կուբանյանի վարույթում առկա է անավարտ 624 քաղաքացիական գործ, գործուղված դատավոր Գ.Նարինյանի վարույթում առկա է անավարտ 657 քաղաքացիական գործ:

Հիմք ընդունելով Գատարանի նախագահի վերոգրյալ միջնորդությունը, Գատարանում առկա քաղաքացիական գործերի վերաբերյալ վիճակագրական տվյալները, Լոռու մարզի ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի դատավոր Գրիգորի Վարդանյանի համաձայնությունը, նկատի ունենալով գործերի քննության ողջամիտ ժամկետների պահպանման և արդար դատաքննության իրավունքի իրացումն ապահովելու անհրաժեշտությունը և ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության դատական օրենսգրքի 14-րդ հոդվածի 3-րդ մասով՝ Հայաստանի Հանրապետության դատարանների նախագահների խորհուրդը

ՈՐՈՇՈՒՄ Է

Լոռու մարզի ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի դատավոր Գրիգորի Վարդանյանին 2017 թվականի սեպտեմբերի 19-ից՝ վեց ամիս ժամկետով, գործուղել Երևան քաղաքի Շենգավիթ վարչական շրջանի ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարան:

**Հայաստանի Հանրապետության
դատարանների նախագահների
խորհրդի նախագահ**

Ա.ՄԿՐՏՈՒՄՅԱՆ

2017թ. սեպտեմբերի 11
ք.Երևան